# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Հնաբերդ, 098025050, ararathnaberd@yandex.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հուլիսի 2016թվականի N 20

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով,Հնաբերդ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հնաբերդ համայնքի ավագանու արտահերթ թիվ 8 նիստի օրակարգը.
1.Հնաբերդ համայնքի 2016 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ
2. ՋԱՔԱՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ
3. ՍԻՄՈՆՅԱՆ ՎԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐԱՍ ՊՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Հնաբերդ, 098025050, ararathnaberd@yandex.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հուլիսի 2016թվականի N 21-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի 2016 թվականի ֆոնդային բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

Եկամտային մաս

1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի №1555-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու մասին» №684-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության Կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով) Գյուղատնտեսության նախարարությանը հատկացված 8 000 000 /ութ միլիոն/ դրամ գումարը տրամադրել Արարատի մարզի Հնաբերդ համայնքին, համայնքում հողերի մշակության և գյուղատնտեսական աշխատանքների լիարժեք կազմակերպումն ապահովելու նպատակով գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու համար որոշումը, Արարատի մարզի Հնաբերդ համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները ավելացնել 8 000 000 /ութ միլիոն/ դրամով և սահմանել ընդամենը 13 059 833.9 դրամ:

2. Ֆոնդային բյուջեի եկամտային մասում ավելացնել նոր կետ՝ Պետությունից հատկացվող կապիտալ սուբվենցիաներ և սահմանել 8 000 000 /ութ միլիոն/ դրամ:

Ծախսային մաս

1. Ֆոնդային բյուջեի ծախսային մասը ավելացնել 8 000 00 /ութ միլիոն/ դրամով և սահմանել ընդամենը 13 059 833.9 դրամ:

2. Պետության կողմից տրամադրված 8 000 000 /ութ միլիոն/ դրամ գումարը հատկացնել Ֆոնդային բյուջեի ծախսային մասի 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 5121 (Տրանսպորտային սարքավորումներ) հոդվածին՝ գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու համար:

3. Ֆոնդային բյուջեի ծախսային մասի 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 5121 (Տրանսպորտային սարքավորումներ) հոդվածը ավելացնել 8 000 000 /ութ միլիոն/ դրամով և սահմանել 12 509.833.9 դրամ:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

2. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ

3. ՍԻՄՈՆՅԱՆ ՎԱԶԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ